

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 43/5

23 հոկտեմբերի 2012թ.

Քննարկվեց «Կոտայ Հիդրո» ՓԲԸ 01.10.2012թ-ի դիմում-գանգատը « ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 20.03.2012թ. թիվ 9/4 որոշմամբ կասեցված վարչական վարույթը վերսկսելու, ինչպես նաև « ԿԱ ՊԵԿ Մյասնիկյանի ՀՏ 16.09.2009թ. թիվ 1006967 և « ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 19.01.2012թ. թիվ 1006967/1 ակտերն առ ոչինչ կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ:

«Կոտայ Հիդրո» ՓԲԸ (այսուհետ նաև Ընկերություն) դիմում-գանգատում մասնավորապես նշված է.

Ընկերությունում կատարված ստուգման և վերստուգման արդյունքում կազմված 16.09.2009թ. թիվ 1006967 ստուգման և 19.01.2012թ. թիվ 1006967/1 վերստուգման ակտերի համար հիմք է հանդիսացել Ընկերության կողմից 2004–2007թթ. օտարված շենք, շինությունների կադաստրային արժեքի վերաբերյալ « ԿԱ ԱԳԿ ՊԿ աշխատակազմի «Մարաշ» տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր) տրամադրած տեղեկությունները:

Ընկերությունը 14.03.2012թ. գանգատ է ներկայացրել վերը նշված վերստուգման ակտի վերաբերյալ: « ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 20.03.2012թ. որոշմամբ Ընկերության գանգատի հիման վրա « ԿԱ ՊԵԿ-ում հարուցված վարչական վարույթը կասեցվել է:

Ընկերության 13.08.2009թ. հայցով ընդդեմ « ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի, երրորդ անձ « ԿԱ ՊԵԿ էրեբունու հարկային տեսչության՝ գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին /թիվ-ՎԴ/3789/05/09 վարչական գործ/, « ԿԱ ՊԵԿ վարչական դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 22.06.2012թ. թիվ ՎԴ/3789/05/09 վճռով Ընկերության հայցը բավարարվել է: « ԿԱ ԱԳԿ ՊԿ «Մարաշ» տարածքային ստորաբաժանման գործողությունները՝ օտարման պահի դրությամբ «Կոտայ Հիդրո» ՓԲԸ կողմից Երևան քաղաքի Արմենակյան 125 հասցեի թվով 29 անշարժ գույքերի կադաստրային արժեքները որոշելու վերաբերյալ, ճանաչվել է ոչ իրավաչափ, այսինքն՝ « ԿԱ ՊԵԿ Մյասնիկյանի ՀՏ 16.09.2009թ. թիվ 1006967 ստուգման և ՕՀՎ 19.01.2012թ. թիվ 1006967/1 վերստուգման ակտերի համար հիմք ծառայած Երևան քաղաքի Արմենակյան թիվ 125 հասցեի թվով 29 անշարժ գույքերի կադաստրային արժեքի վերաբերյալ « ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի տրամադրած տեղեկությունները « վարչական դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 22.06.2012թ. թիվ ՎԴ/3789/05/09 վճռով վերացվել են:

« ԿԱ ՊԵԿ Մյասնիկյանի ՀՏ-ն դեռևս 22.04.2010թ. հայցապահանջ էր ներկայացրել դատարան ընդդեմ Ընկերության՝ գումար բռնագանձելու պահանջի մասին: « վարչական դատարանի 18.06.2010թ. թիվ ՎԴ/4529/03/10 որոշմամբ գործի վարույթը կասեցվել էր՝ մինչև « վարչական դատարանի վարույթում գտնվող թիվ ՎԴ/3789/05/09 վարչական գործով վերջնական դատական ակտի կայացումը:

Նման պայմաններում գործի վարույթը կասեցնելու հիմքը վերացել է: Մինչև « վարչական դատարանում ըստ « ԿԱ ՊԵԿ Մյասնիկյանի ՀՏ հայցի ընդդեմ Ընկերության՝ գումար բռնագանձելու պահանջի մասին թիվ ՎԴ/4529/03/10 վարչական գործի վարույթը վերսկսելը կարծում եմ « վարչական դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 22.06.2012թ. թիվ ՎԴ/3789/05/09 վճիռը պետք է Մյասնիկյանի ՀՏ 16.09.2009թ. թիվ 1006967 ստուգման և ՕՀՎ 19.01.2012թ. թիվ 1006967/1 վերստուգման ակտերը վերանայելու հիմք հանդիսանա, քանի որ այդ ակտերի հիմքում դրված Կադաստրի կողմից ներկայացված, չհիմնավորված ու սխալ կատարված ոչ իրավաչափ հաշվարկները, ապա նույն հաշվարկների հիման վրա կազմված ակտերը, իրավական հետևանքներ չեն կարող առաջացնել, քանի որ «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» « օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առ ոչինչ վարչական ակտն ընդունման պահից իրավական ուժ չունի և ենթակա չէ կատարման կամ կիրառման: Այսինքն՝ նշված ակտերն առարկայազուրկ են և իրավական հետևանքներ չեն կարող առաջացնել:

Հիշատակված ակտերով հարկային պարտավորություններն առաջադրվել են <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի դ/ կետի և <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ կետի հիմքերով: Մինչդեռ նշված դրույթներով 2004-2007թթ. օտարված անավարտ (կիսակառույց) շենք, շինությունների համար թե՛ շահութահարկ, թե՛ ավելացված արժեքի հարկ նախատեսված չէր: Այսպես.

<Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի (մինչև 01.01.2009թ. գործող խնբագրությամբ) 43-րդ հոդվածի դ/ կետի համաձայն՝ հաշվեգրման եղանակով եկամուտները հաշվարկելիս, հարկատուն հաշվի է առնում հետևյալ առանձնահատկությունը՝ շենքերի, շինությունների օտարման դեպքում եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված գործարքի կատարման օրվա դրույթամբ: Հարկվող շահույթը որոշելիս շենքերի շինությունների օտարումից, եկամուտը հաշվարկվում է գույքահարկով հարկման նպատակով՝ դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքից ոչ պակաս չափով: Այդ չափից պակաս հատուցման դեպքում տարբերությունը գործարքի կատարման օրը դիտվում է որպես նոր սեփականատիրոջը ներված պարտավորություն:

<Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի (մինչև 01.01.2009թ. գործող խնբագրությամբ) 8-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է հետևյալ կարգով, շենքերի, շինությունների օտարման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է նույն հոդվածով սահմանված կարգով, բայց ոչ պակաս՝ գույքահարկով հարկման նպատակով՝ դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքից:

<Շահութահարկի մասին> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կաաարելու մասին> ՀՀ 21.08.2008թ. թիվ 147-Ն օրենքով և <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին> ՀՀ 21.08.2008թ. թիվ 146-Ն օրենքով փոփոխություններ և լրացումներ են կատարվել <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի դ/ կետում և <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ կետում:

Նշված փոփոխություններով սահմանվել է, որ շահութահարկ և ավելացված արժեքի հարկ է նախատեսվում նաև <շենք, շինությունների (այդ թվում՝ անավարտ, (կիսակառույց)), բնակելի կամ այլ տարածքների> օտարման դեպքում: Փոփոխություններ կատարելու մասին նշված օրենքներն ուժի մեջ են մտել 01.01.2009թ., այսինքն՝ մինչև 01.01.2009թ. անավարտ (կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների օտարման դեպքում շահութահարկ և ավելացված արժեքի հարկ նախատեսված չէր: Հետևաբար Մյասնիկյանի ՀՏ 16.09.2009թ. թիվ 1006967 ստուգման և ՕՀՎ 19.01.2012թ. թիվ թիվ 1006967/1 վերստուգման ակտերն իրավաչափ չեն, առ ոչինչ են:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածով ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով: Այսինքն, եթե Ընկերության կողմից 2006-2007թթ. անավարտ շենք, շինությունների օտարման դեպքում <Շահութահարկի մասին> և <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքներով հարկային պարտավորություններ նախատեսված չէր, ապա հարկային մարմինը նշված դեպքում չէր կարող Ընկերության նկատմամբ հարկային պարտավորություններ առաջադրել:

Բացի այդ, <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի <դ> կետի, նույն հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերի դրույթներից հետևում է, որ Մյասնիկյանի ՀՏ 16.09.2009թ. թիվ 1006967 ստուգման և ՕՀՎ 19.01.2012թ. թիվ թիվ 1006967/1 վերստուգման ակտերով Ընկերությանն առաջադրված հարկային պարտավորություններն իրավաչափ չեն, այսինքն՝ ակտն առ ոչինչ է, հետևաբար, այն ընդունման պահից իրավաբանական ուժ չունի և ենթակա չէ կատարման, ակտի չկատարելը չի կարող առաջացնել որևէ պատասխանատվություն Ընկերության համար, իսկ հարկային մարմինը պարտավոր է անհապաղ հաստատել այդ ակտի առ ոչինչ լինելը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքով Ընկերությունը խնդրում է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանձատարկման հանձնաժողովի 20.03.2012թ. թիվ 9/4 որոշմամբ կասեցված վարչական վարույթը վերսկսել ու վերոգրյալ ակտերը ճանաչել անվավեր կամ առոչինչ:

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով «Կոտայ Հիդրո» ՓԲԸ ներկայացուցչի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող կյոթերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Համաձայն « ԿԱ ՊԵԿ նախագահի 19.07.2011թ-ի թիվ 1006967/1 հանձնարարագրի, «Կոտայ Հիդրո» ՓԲԸ-ում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող « օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերստուգում: Արդյունքում 19.01.2012թ-ին կազմվել է թիվ 1006967/1 ակտը, որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 516499800 դրամ, այդ թվում՝ շահութահարկ 246218100 դրամ, ԱԱՀ 270281700 դրամ:

«Կոտայ Հիդրո» ՓԲԸ-ն, համաձայն չլինելով « ԿԱ ՊԵԿ 19.01.2012թ-ի թիվ 1006967/1 ակտի հետ, 14.03.2012թ-ին « ԿԱ պետական եկամտների կոմիտե ներկայացրել է գանգատ:

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 20.03.2012թ-ի նիստում քննության է առնվել Ընկերության 14.03.2012թ-ի գանգատը և ընդունվել է թիվ 9/4 որոշումը, որի համաձայն «Կոտայ Հիդրո» ՓԲԸ 14.03.2012թ-ի գանգատի հիման վրա « ԿԱ պետական եկամտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցվել է: Նման որոշում կայացնելու համար հիմք է հանդիսացել Ընկերության կողմից « ԿԱ ԱԳԿ ՊԿ աշխատակազմի «Մարաշ» տարածքային ստորաբաժանման կողմից տրամադրված փաստաթղթերն առ ոչինչ ճանաչելու վերաբերյալ հայցադիմում ներկայացնելու հանգամանքը, քանի որ « ԿԱ ՊԵԿ 19.01.2012թ-ի թիվ 1006967/1 ակտով լրացուցիչ պարտավորություններ առաջադրելու համար հիմք են հանդիսացել հիշատակված փաստաթղթերում արտացոլված տվյալները:

«Կոտայ Հիդրո» ՓԲԸ կողմից 01.10.2012թ-ին բերվել է դիմում-գանգատ՝ « ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 20.03.2012թ. թիվ 9/4 որոշմամբ կասեցված վարչական վարույթը վերսկսելու, ինչպես նաև « ԿԱ ՊԵԿ Մյասնիկյանի ՀՏ 16.09.2009թ. թիվ 1006967 և « ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 19.01.2012թ. թիվ 1006967/1 ակտերն առոչինչ կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ: Այսինքն, 01.10.2012թ-ի դիմում-գանգատով ներկայացվել է նոր պահանջ, որով « ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 19.01.2012թ. թիվ 1006967/1 ակտից բացի Ընկերությունը խնդրել է առոչինչ կամ անվավեր ճանաչել նաև « ԿԱ ՊԵԿ Մյասնիկյանի ՀՏ 16.09.2009թ. թիվ 1006967 ակտը: Այս կապակցությամբ նշվեց, որ Ընկերության 14.03.2012թ-ի գանգատով բերված պահանջը վերաբերել է միայն « ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 19.01.2012թ. թիվ 1006967/1 ակտն առ ոչինչ կամ անվավեր ճանաչելուն և « ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 20.03.2012թ. թիվ 9/4 որոշմամբ կասեցվել է «Կոտայ Հիդրո» ՓԲԸ 14.03.2012թ-ի գանգատի հիման վրա « ԿԱ պետական եկամտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը: Հետևապես «Կոտայ Հիդրո» ՓԲԸ 01.10.2012թ-ի դիմում-գանգատով բերված պահանջի այն մասը, որը վերաբերում է նաև « ԿԱ ՊԵԿ Մյասնիկյանի ՀՏ 16.09.2009թ. թիվ 1006967 ակտն առոչինչ կամ անվավեր ճանաչելուն, չի կարող քննարկվել սույն վարչական վարույթի ընթացքում:

«Կոտայ Հիդրո» ՓԲԸ ներկայացուցիչը Հանձնաժողովին ներկայացրեց 23.10.2012թ-ի գրությունը, որով ընկերությունը խնդրում է փոփոխել 01.10.2012թ-ի դիմում-գանգատով բերված պահանջը: Մասնավորապես, Ընկերությունը խնդրում է վերանայել « ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 19.01.2012թ-ի թիվ 1006967/1 ակտով լրացուցիչ առաջադրված պարտավորությունները հաշվի առնելով այն հանգամանքը, որ « վարչական դատարանի օրինական ուժ ստացած 22.06.2012թ-ի թիվ ՎԴ/3789/05/09 վճռով «Կոտայ Հիդրո» ՓԲԸ հայցը՝ « ԿԱ ԱԳԿ ՊԿ աշխատակազմի «Մարաշ» տարածքային ստորաբաժանման կողմից գույքահարկով հարկման նպատակով «Կոտայ Հիդրո» ՓԲԸ կողմից 2007թ. օտարված թվով 28 տարածքների և 2005թ. օտարված թվով 1 տարածքի համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքները սահմանող փաստաթղթերը առ ոչինչ ճանաչելու վերաբերյալ, բավարարվել է:

«Կոտայ Հիդրո» ՓԲԸ 01.10.2012թ-ի դիմում-գանգատի հետ կից ներկայացվել է « վարչական դատարանի 22.06.2012թ-ի թիվ ՎԴ/3789/05/09 օրինական ուժի մեջ մտած վճիռը, որի համաձայն «Կոտայ Հիդրո» ՓԲԸ հայցը՝ « ԿԱ ԱԳԿ ՊԿ աշխատակազմի «Մարաշ» տարածքային ստորաբաժանման կողմից գույքահարկով հարկման նպատակով «Կոտայ Հիդրո» ՓԲԸ կողմից 2007թ. օտարված թվով 28 տարածքների և 2005թ. օտարված թվով 1 տարածքի համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքները սահմանող փաստաթղթերը առոչինչ ճանաչելու վերաբերյալ, բավարարվել է: Այսինքն, « վարչական դատարանի օրինական ուժ ստացած

22.06.2012թ-ի թիվ ՎԴ/3789/05/09 վճռի համաձայն, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ աշխատակազմի <Մարաշ> տարածքային ստորաբաժանման կողմից տրամադրված հիշատակված փաստաթղթերը ճանաչվել են առոչինչ:

Համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին կետի. <Վարչական դատավարության կարգը սահմանվում է սույն օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով այնքանով, որքանով դրա նորմերը իրենց էությանբ կիրառելի են (<mutatis mutandis>) վարչական դատավարության նկատմամբ և չեն հակասում սույն օրենսգրքին և վարչական դատավարության էությանը>: Իր հերթին, համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի. <Օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում>:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ 19.01.2012թ-ի թիվ 1006967/1 ակտով լրացուցիչ պարտավորություններ հաշվարկելու համար հիմք են հանդիսացել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ աշխատակազմի <Մարաշ> տարածքային ստորաբաժանման կողմից տրամադրված փաստաթղթերը, Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ վարչական դատարանի օրինական ուժ ստացած 22.06.2012թ-ի թիվ ՎԴ/3789/05/09 վճիռը հիմք է հանդիսանում Հանձնաժողովի 20.03.2012թ-ի թիվ 9/4 որոշմամբ <Կոտայ Հիդրո> ՓԲԸ 14.03.2012թ-ի գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում կասեցված վարչական վարույթը վերսկսելու, ինչպես նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ 19.01.2012թ-ի թիվ 1006967/1 ակտով լրացուցիչ առաջադրված պարտավորությունները վերանայելու համար:

Համաձայն վերստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց 23.10.2012թ-ի տեղեկանքի, ՀՀ վարչական դատարանի օրինական ուժ ստացած 22.06.2012թ-ի թիվ ՎԴ/3789/05/09 վճռի հիման վրա ՀՀ ԿԱ ՊԵԿ 19.01.2012թ-ի թիվ 1006967/1 ակտով առաջադրված պարտավորությունները վերահաշվարկելու արդյունքում նշված ակտով լրացուցիչ վճարման ենթակա պարտավորության չափը կկազմի ընդամենը 11.384.503 դրամ, այդ թվում՝ ավելացված արժեքի հարկ 5.294.300 դրամ, տույժ 2.898.623 դրամ, տուգանք 3.191.580 դրամ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 20.03.2012թ-ի թիվ 9/4 որոշմամբ կասեցված վարչական վարույթը վերսկսել:
2. Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ 19.01.2012թ-ի թիվ 1006967/1 ակտի 1-ին կետը:
3. ՀՀ ԿԱ ՊԵԿ 19.01.2012թ-ի թիվ 1006967/1 ակտի 5-րդ կետից նվազեցնել ընդամենը 258.897.197 դրամ, այդ թվում՝ ավելացված արժեքի հարկ 120.961.640 դրամ, տույժ 65.358.577 դրամ, տուգանք 72.576.980 դրամ:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ